ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Թափուր տեղի

«Գյումրու պետական տեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է դասախոսի թափուր տեղի մրցույթ.

1. Հանրակրթական առարկաներ՝ «Ֆիզկուլտուրա» և «Պատմություն»,
2. «Երկաթուղու ավտոմատիկայի, հեռամեխանիկայի և կապի» մասնագիտության համար հատուկ մասնագիտական մոդուլներ ԱԿՈՒ սարքավորումների վերաբերյալ,
3. «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում» մասնագիտության համար հատուկ մասնագիտական մոդուլներ,
4. Ձեռներեցություն մոդուլը:

Դասախոսի թափուր տեղի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներն են՝ ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ, եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

Մրցույթին մասնակցելու համար անձը հաստատության տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում ներքոնշյալ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը), պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են «Գյումրու պետական տեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ-ում՝ ք.Գյումրի, Տիգրան Մեծ 29 հասցեում, 2025թ. օգոստոսի 07-ից 20-ը ընկած ժամանակահատվածում ժամը 10:00-16:00:

Մրցույթն անցակցվելու է «Գյումրու պետական տեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ-ում՝ 2025թ. օգոստոսի 26-ին և 27-ին ժամը 12:00-ին և 14:00-ին:

Հասցեն՝ ք.Գյումրի, Տիգրան Մեծ 29: Հարցերի դեպքում զանգահարել +312 51900 հեռախոսահամարին:

Ձև 4

Ինքնակենսագրություն

1. Աշխատանքային գործունեություն (վերջին աշխատանքի վայրը լրացվում է առաջինը)
2. Կրթություն (մասնագիտական կրթության որակավորման աստիճանը՝ դիպլոմ/ներ/, կրթության վկայագրերը, հավաստագրեր, վկայականներ)
3. Կոչումներ
4. Որակավորման տարակարգ